



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ  
NATIONAL ASSEMBLY OF THE REPUBLIC OF ARMENIA



Խոնարակություն

20 հունվարի 2010

ԺԱ-Ե-0035/10

Պարոն Դովիկ Աբրահամյանին  
Ազգային ժողովի նախագահ  
Երևան, Հայաստանի Հանրապետություն

Այսօր ստացանք Աժ աշխատակազմի կողմից հունվար 19-ով կնքված եւ Ձեր կողմից հունվարի 15-ին ստորագրված «ՀՀ Աժ նախագահի կարգադրությունը Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատվիրակության կազմը հաստատելու մասին», որով, մեր կարծիքով՝ խախտելով ՀՀ մի շարք օրենքների եւ ԵԽԽՎ՝ կանոնակարգի պահանջները, Դուք հայկական պատվիրակության մշտական անդամների ցանկից հանել եք ընդդիմադիր «Ժառանգություն» կուսակցության ներկայացուցչին եւ հրահանգել չֆինանսավորել ու չկազմակերպել ԵԽԽՎ «Ժողովրդական կուսակցություն խմբի» բյուրոյի, մոնիթորինգի հանձնաժողովի ու 4 այլ հանձնաժողովների հիմնական անդամ Զարուհի Փոստանջյանի գործուղումը այդ հանձնաժողովների առաջիկա նիստերին:

Մենք դեռեւս կանդրադառնանք այս հակաօրինական ակտին: Սակայն, մինչ այդ՝ խնդրում ենք տրամադրել այդ կապակցությամբ հրավիրված խորհրդակցության արձանագրությունը (1), միջազգային խորհրդարանական կազմակերպություններում, միջխորհրդարանական հանձնաժողովներում Ազգային ժողովի պատվիրակությունների կազմավորման եւ գործունեության կարգերը (2), որոնք որպէս Աժ նախագահի կողմից ընդունվող ու հաստատվող ակտեր «Աժ կանոնակարգ» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի է) կետի եւ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կազմվում, հաստատվում եւ երկօրյա ժամկետում ուղարկվում են հանձնաժողովներին, խմբակցություններին եւ պատգամավորական խմբերին:

Խնդրում ենք մեզ տրամադրել նաեւ ԵԽ զլխավոր քարտուղարին Ձեր անունից կամ Ձեր լիազոր անձի միջոցով փոխանցված նամակը եւ փաստաթղթերի պատճենները պատվիրակության անդամների մանդատների հաստատման վերաբերյալ:

Հարգանք՝

Ստյոպա Սաֆարյան  
Խմբակցության ղեկավար